


ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼԺԿ-ի ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ  
ԳԻՏԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ


Հեռակա կոնսուլտացիա սկսնակ ուսուցչեն

Հ | Арм.  
3-13882



ՀՈԼՈՎՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ  
ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

ИНВ. № 15925



ԼՈՒՀՐԱՏ



431-99-5

- 63 JUL 2013

7104

04 MAY 2010

## Գ. Ներսիսյան

MOA

## ՀՈԼՈՎՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ Յ. ԲԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Քերականությունը սիստեմատիկ ուսումնասիրության նյութ պետք ե դառնա հենց սկզբից: Դժբախտաբար վորոշ ուսուցչւներ լիզու ասելով հասկանում են կարգալու, գրելու և բանափոր խոսքը զարգացնելու ուղղությամբ կատարվող աշխատանքները միայն, այսպիսով քերականությանը հատկացնելով աննշան դեր:

Լեզվի ուսուցման հիմքը դրվում է տարրական դպրոցում: Յեթև քերականության ավանդումը տարրականում հասցվի հարկ յեղած բարձրության, ապա վատահ կարելի յե ասել վոր 5—7-րդ դասարաններում կարելի կլինի լիովին սպասել հայոց լիզվի ուսուցումը, և աշակերտները կփոխադրվեն 8-րդ դասարան լիակատար գրագետ դարձած: Քերականության հյութը ծրագրում այնպես ե բաշխված, վոր աշակերտները հենց առաջին խակ դասարանից սկսեն ուսումնասիրել այն: Յ-րդ դասարանի քերականության ծրագրի հիմնական մասը գոյականի ուսուցումն ե, հատկապես նրա հոլովումը: Գոյականի հոլովումը դրված ե նաև 5-րդ դասարանի ծրագրում: Սակայն դրանից այն սիալ հետեւթյունը չպիտի հանել թե Յ-րդ դասարանում անցածը 5-րդում պետք ե նույնությամբ կրկնել:

Յ-րդ դասարանում աշակերտները պետք ե գաղափար կազմեն գոյականի, նրա տեսակների և հոլովման մասին: Նրանք պետք ե հասկանան, վոր հոլովմերը գոյականի վերջավորության փոփոխություն չեն լոկ: Նրանք հոլովը գտնելիս պետք ե առաջնորդվեն վոչ միայն բառի վերջավորությամբ, այլ և նախադասության մեջ կատարած պաշտոնով: Նրանք պետք ե կարողանան բառի ձեեի փոփոխությունը և նախադասության մեջ նրա կատարած պաշտոնը զուգակցելով՝ վորոշել գոյականների հոլովը: Խակ 5-րդ դասարանում հոլովման ուսուցումն սպասվում է ըստ ամենայնի: Այստեղ աշակերտները պետք ե իմանան հոլովմերի բոլոր առումները, հոլովմանը գրաբարյան հոլովմերը և այլն:

Մինչեւ հոլովմանն անցնելը՝ Յ-րդ դասարանի աշակերտ-

ներն արդեն դաղափար պիտի ունենան գոյականների մասին պիտի իմանան, վոր գոյականները կարող են ցույց տալ իր (առարկա) և անձ: Այդ տարրերությունը պիտի ըմբռնել տալ վորովհետեւ դա կարեվոր դեր ե խաղում հայոց լեզվի խնդրառության գործում, այսինչ շնչափոր ե անշունչ հասկացողությունները վոչ մի նշանակություն չունեն հոլովման գործում: Հոլովման ուսուցումը պետք ե սկսել՝ գիտել տարով գոյականի կրած փոփոխությունը նախադասության մեջ: Այսպես, վերցնում ենք վորմեն գոյական (ի հոլովման) և նրանով կազմում մի շարք նախադասություններ և դրում գրատախտակին՝ այնպես, վոր հոլովմով բառն ըստ հնարավորին իր տարրեր ձեվերով կազմի ուղղահայց մի շարք: Որինակ:

Ուսուցիչը մտավ դասարան:

Ուսուցչի խոսքն որենք ե:

Ուսուցչին մոտեցավ աշակերտը:

Ուսուցչին սիրում են բոլոր աշակերտները:

Ուսուցչից նամակ ստացավ Պաշիկը և այլն:

Աշակերտներն ուսուցչի ոգնությամբ հերթով վերլուծելով բոլոր նախադասությունները՝ գտնում են, վոր 1-ին նախադասության մեջ «ուսուցիչ» բառը գործ ե ածկել անփոփոխ, ուղիղ ձեռվով և գարձել ե նախադասության յենթական: Յերկրորդ նախադասության մեջ նույն բառն ստանալով վերջավորություն՝ դարձել ե յենթակայի լրացում («ուսուցիչ» բառի զլսին ամեն դեպքում պետք ե գրել նրա պաշտոնը նախադասության մեջ): Յերրորդ նախադասության մեջ նույն բառը նույն վերջավորությամբ (պետք ե բացատրել, վոր վորոշիչ հողը՝ ը, և վերջավորության հետ կապ չունի) գարձել ե ստորոգյալի լրացում: Չորրորդ նախադասության մեջ նույն բառն ունի նույն վերջավորությունը, ինչ Յ-րդ նախադասության մեջ, և դարձյալ ստորոգյալի լրացում ե՝ բայց վորոշ տարրերությամբ: յեթև Յ-րդ նախադասության մեջ «ուսուցիչը» այն առարկան ե, վորին մուտենում ե յենթական, վորին հանգում ե գործողությունը, ապա 4-րդ նախադասության մեջ, ընդհակառակը, «ուսուցիչն» այն առարկան ե, վորը կրում ե գործողությունը: 5-րդ նախադասության մեջ «ուսուցիչը» ստացել ե բոլորմին ուրիշ վերջավորություն և գարձել ե դարձյալ ստորոգյալի լրացում:

Ուսուցչի հարցերի ոգնությամբ նախադասությունները վեր-

լուծելուց և ուսուցիչ բառի կրած փոփոխության համապատասխան պաշտոնը գտնելուց հետո՝ այդ նախադասություններից դուրս ենք բերում ուսուցիչ բառի բոլոր ձեվերը, գրում իրարտակ մի շարքում՝ դիմացը ցույց տալով նրանց պաշտոնը նախադասության մեջ և ընդգծում հոլովական վերջավորությունները։ Այսպիսով ստանում ենք հետեվյալ բառաշարքը։

ուսուցիչը	յենթակա
ուսուցիչ	յենթակայի լրացում
ուսուցչին	ստորոգյալի լրացում
ուսուցչին	ստորոգյալի լրացում
ուսուցչին	ստորոգյալի լրացում
ուսուցչից	ստորոգյալի լրացում
ուսուցչով	ստորոգյալի լրացում

Նույն ձեվով կազմում ենք նախադասություններ, վորտեղ հոլոված հանդես ե գալիս առարկա ցույց տվող վորեվե գոյական, որինակ։

Պարտեզը գեղեցիկ ե:	
Պարտեզի ծառերը ծաղկել են:	
Վաշիկը մոտեցավ պարտեզին:	
Յերեխանները ջրում են պարտեզը:	
Վաշիկը հեռացավ պարտեզից:	
Սեղիկն անցավ մեր պարտեզով:	
Յերեխանները խաղում են պարտեզում:	

Այս նախադասությունները նույնպես մեկ առ մեկ քննության են առնվում. ուսուցչի ոգնությամբ յերեխանները դուրս են բերում «պարտեզ» բառի կրած փոփոխությունները՝ կապված նախադասության մեջ նրա կատարած պաշտոնի հետ, ապա կազմում հետեվյալ տախտակը։

պարտեզը	յենթակա
պարտեզի	յենթակայի լրացում
պարտեզին	ստորոգյալի լրացում
պարտեզը	ստորոգյալի լրացում
պարտեզից	ստորոգյալի լրացում
պարտեզով	ստորոգյալի լրացում
պարտեզում	ստորոգյալի լրացում

Մտացած յերկու բառաշարքերը համեմատում են իրար հետ, և ուսուցչի հարցերի ոգնությամբ դալիս են այն յեղրակա-

ցության, թե գոյականները նախադասության մեջ գործածվելով նայած իրենց կատարած պաշտոնին՝ յերբեմն պահպանում են իրենց ուղիղ ձեվը, յերբեմն ել հանդես են գալիս փոփոխած ձեվով՝ զանազան վերջավորությամբ։

Յերեխաններին այդ բանում համոզելուց հետո (անպայման կոնկրետ որինակների ոգնությամբ)՝ տալիս ենք սահմանումը Ուրեմն յերեխանները պիտի ըմբռնեն, վոր յուրաքանչյուր հոլով և ձև ե, և պաշտոն, փունկցիա, և վոր միայն ձեվով չպիտի վորոշել հոլովը Զի կարելի, որինակ, հարցնել, թե ինչ հոլով են ուսուցչի», «պարտեզը» և այլն, վոչ միայն Յ-րդ գասարանում, այլև 10-րդ գասարանում։ Այդ բառերի հոլովը կարելի յէ ցույց տալ միայն նախադասության մեջ։ Ուստի վերոհիշյալ հարցը ուղղակի շփոթեցնող, վնասակար հարց եւ։

Սահմանումը տալուց հետո հենվելով վերել տրված որինակների վրա (կարելի յէ ավելի շատ որինակներ տաք մանավանդ յեթե նկատելի յէ, վոր յերեխանները գեռ լավ չեն ըմբռնել) ուսուցիչը բացատրում ե, թե գոյականի յուրաքանչյուր փոփոխած ձեվը, վոր ցույց ե տալիս նրա ինչ պաշտոն կատարելը, կոչվում ե հոլով, և վոր հայերենում կա Շ հոլով, վորոնք ունենառանձին անուններ։ Ուսուցիչը գրատախտակի վրա գրում ե հուլովների անունները և արտագրել տալիս աշակերտներին։ Ավելորդ ե հիշեցնել, վոր ուսուցիչը պարտավոր ե ձեռք առնել բուլոր միջջոցները, վորպեսզի վոչ վոք վորնե հոլով սխալ չգրի։

Հոլովների մասին ընդհանուր հասկացողություն տալուց հետո, պետք ե անցնել առանձին հոլովների ուսուցմանը։ Հարկ ե հիշել, վոր հոլովների և ընդհանրապես քերականական վորեվե կանոնի ուսուցումը պետք ե գուզակցվի գրավոր և բանավոր միշտաք վարժությունների հետ։ Նոր նյութին պետք ե անցնել միշտայն այն ժամանակ, յերբ համոզել ենք, վոր աշակերտները նախանակութը յուրացը են, ձիշտ ե, կրկնություններն անհրաժեշտ են և շատ խոշոր գեր են կատարում նյութի յուրացման գործում, բայց ուսուցիչը յուր հույսը յերբեք չպիտի դնի դրանց վրա, այլ պիտի աշխատի նյութը յուրացնել տալ անցնելու ժամանակ։

Ուղղական հոլովը Յ-րդ գասարանում պիտի կապել յենթակայի հետ։ Մի շարք որինակներով ցույց ենք տալիս, վոր յենթական արտահայտվում ե ուղիղ ձեվով վորեվե գոյականով (հողը հաշվի չի առնվում)։ Գրում ենք զրատախտակին նախա-

դասություններ, ընտրում այդ նախադասությունների մեջ գործածված գոյականները և առաջարկում, վոր յերեխանները ցույց տան, թե դրանցից վնարը ուղիղ ձեվով և գրված և վորը փոփոխված ձեվով (պետք և ընտրել այնպիսի նախադասություններ, վորտեղ ուղղականի ձեվով գրված հայցական չլինի): Յերեխանները հավաստում են, վոր բոլոր նախադասությունների մեջ ել ուղիղ ձեվով գործածված գոյականները յենթակա յեն, իսկ թեքված գոյականները լրացում: Հանում ենք ընդհանրացում, վոր ուղղականը յենթակայի հոլովն և վոր բոլոր յենթականները գրվում են ուղղական հոլովով և ուղղական են կոչվում, վորով հետեւ գործ են ածվում անփոխիս, ուղիղ ձեվով, գրանից ել այդ հոլովը կոչվում է ուղղական (ուղիղ-ական): Այսուհետեւ կատարվում են բանավոր վարժություններ, ուսուցիչն ասում և նախադասություններ և պահանջում, վոր գտնեն ուղղական հոլովները (յենթականներ), կամ տալիս և գոյականը և պահանջում, վոր այն դործածեն նախադասության մեջ ուղղական հոլովով (այսինքն՝ գարծնեն կազմով նախադասության յենթական): Բանավոր վարժություններից հետո կատարվում են զրավոր վարժություններ (գոսարանում): Ուսուցիչը հանձնարարում է արտադրել մի քանի նախադասություն և գտնել ու ընդգծել ուղղական հոլովները. գրում և գրատախտակի վրա մի քանի տիպիկ գոյական և պահանջում, վոր կազմեն այնպիսի նախադասություններ, վորտեղ այդ գոյականները գործածված լինեն ուղղական հոլովով:

Վերջում պետք է սովորեցնել նաև, վոր ուղղական հոլովը պատախանում է ի՞նչ հարցին, յեթե առարկա յե և ո՞վ հարցին, յեթե անձ եւ: Ավելի դժվար է յուրացնել տալ սեռական հոլովը: Սեռականը հիմնականում հատկացուցչի հոլովն և, ուստի մի շարք տիպիկ որինակների միջոցով պետք է ցույց տալ, վոր սեռականը զրվում է յենթակայի վրա և ցույց է տալիս թե ում, կամ ինչին և պատկանում, վերաբերում յենթական. ղրա համար չեղու պետք և դնել, ինարկե, պատկանելության վրա: Անհրաժեշտ է ընտրել այս բոլորի համար հաջող որինակներ:

Ուսուցիչը գրում է գրատախտակին Պետիկի գիրքը նոր եւ: Վերլուծումից պարզվում ե, վոր գիրքը յենթակա յե, նոր և ստորոգյալ, իսկ Պետիկի յենթակայի լրացում: Ուսուցչի հաջող հարցերի միջոցով աշակերտները պարզում են, վոր Պետիկի բառը դրված է յեւյն ձեվով վերլուծվում են մի շարք հետեւյալ տիպի որինակներ:

կանում յենթական՝ գիրքը: Հետո գրվում ե, մատիսի ծայրը կոտրվեց, վերլուծելիս պարզվում ե, վոր մատիսի բառը գրված և ծայր-ի վրա և ցույց է տալիս, թե ծայրը մատիսին և և վոչ գրչինը կամ սեղանինը: Որինակները բազմացնելու միջոցով (ծառի նյուղը, գետի ջուրը, դպրոցի աօակերտը, բաղադրի փողոցները, աօակերտի գրեթերը, Համմիկի ջուրակը, Վաշիկի պարտեզը և այլն) յերեխանները վարժվում են սեռական հոլովը միշտ կտպել կորեկե գոյականի հետ, առանց անունն իմանալու հասկացողություն են կաղմում հատկացուցչի մասին: Դրանից հետո բացատրվում ե, վոր պատկանելություն ցույց տվող բառը, յեթե անձ ե, ապա պատախանում ե ո՞ւմ հարցին, յեթե առարկա յե, ինչի՞ հարցին: Այսուհետեւ աշակերտներին առաջարկվում է գրքի համապատասխան նախադասություններից հիշյալ հարցերի ողնությամբ գուրս բերել սեռական հոլովները. ապա արգում են բառեր և պահանջմում, վոր աշակերտները դրանք գործածեն նախադասության մեջ սեռական հոլովով:

Դասարանում կատարած բանավոր և գրավոր վարժություններից հետո արգում և տնային աշխատանք՝ խորացնելու սեռական հոլովի յուրացումը: Սեռական հոլովը սովորեցնելիս պետք է վերցնել «ի» հոլովան տակ զնացող բառեր:

Տրական հոլովը նախադասության մեջ դառնում է անուղղակի խնդիր և պարագա: Յ-րդ գասարանի աշակերտները արական հոլովի բոլոր առումները չեն կարող սովորել: դա նրանց համար անմատչելի յե և ավելորդ: Այդ հոլովն ուսուցանելիս պետք է վերցնել այնպիսի որինակներ, վորտեղ տրականը հանդես և գալիս վրապես անուղղակի խնդիր՝ հանգման առարկա, դեպի ուր ուղղվում ե, համում, հանգում և գործողությունը:

Գրատախտակի վրա գրվում ե. Սեղան մօսեցավ գրատիստին: Նախադասությունը վերլուծելուց հետո պարզվում ե, վոր գրատիստակին բառը ստորոգյալի լրացում ե և ցույց է տալիս այն առարկան, դեպի ուր ուղղվում է Սեղայի կատարած գործողությունը: Սեղայի մոտենալու գործողությունը հանգում ե, համում և գրատախտակին, գրատախտակին այն կետն ե, վորի մոտ վերջանում է յենթակայի գործողությունը: Այսուհետեւ գըրշում և նույն ձեվով վերլուծվում են մի շարք հետեւյալ տիպի որինակներ:

Դնացքը մոտեցավ կայարանին:

Ուսուցիչը տեսարը հանձնեց աշակերտին:

Վաչիկը փողոցում հանդիպեց ուսուցչին:  
Մայրիկը նախաճաշ ուղարկեց Սուրբիկին:  
Եման գիրքը տվեց դաստիարակին:

Յերբ ուսուցիչը նկատում է, վոր յերեխաները բավարար չափով յուրացրին տրականի՝ հանգման առարկա լինելու գաղափարը, ասում է, վոր սեռականը և տրականը պատասխանում են միեմունյն հարցին (ո՞ւմ և ինչի՞) և ունեն ճիշտ նույն վերջավորությունը: Ուսուցիչը բացատրում է, վոր տրական հոլովը շատ հաճախ ունենում և «Յ» վորոշիչ հոդը, վորը վոչ մի կապ չունի հոլովական վերջավորության հետ, և այդ բանը հիմնավորում է մի շարք որինակներով («Ուսուցիչը զիրքը տվեց աշակերտի կամ աշակերտին», «Եմիկը մտեցալ խանութի կամ խանութին» և այլն):

Յերբ աշակերտները շփոթում են տրականը սեռականի հետ, բացատրվում է, վոր տրականը միայն ստորոգյալի լրացում է, իսկ սեռականը՝ յենթակայի. յեթե աշակերտի բառը դրված է յենթակայի վրա, կլինի սեռական, իսկ յեթե դրված է ստորոշյալի վրա, կլինի տրական:

Հոլովակը ամենադժվարը հայցականն է, վոր վոչ միայն Յ-րդ, այլ և բարձր՝ դասարաններում շփոթվում է մի կողմից ուղղական, մյուս կողմից սեռական և տրական հոլովակների հետ: Հայցական հոլովն ուսուցանելիս վերցնում ենք ամենակարելիոր առումը՝ գործողության ոբյեկտ դառնալը և նրա վրա կառուցում բոլոր որինակները: Այդ պատճառով ել նախադասություններ կազմելիս պետք է վերցնել միայն անցողական բայեր և այն ել այնպիսի, վոր գործողության անցումն ուղիղ խնդրին լինի ցայտուն, ակնբախ:

Այսպիս, որինակ, դրատախտակին գրում ենք. Սոնիկը վարունգ և ուսում: Նախադասությունը վերլուծելիս պարզվում է, վոր վարունգ բառը ստորոգյալի լրացում է և կրում է իր վրա յենթակայի կատարած գործողությունը, փոխվում է այդ գործողությունից: Քաղլուրինը մեր փառցում նոր դպրոց կառուցեց նախադասության մեջ դպրոց բառը կառուցեց ստորոգյալի լրացումն է, վորն իր վրա կրում է Քաղլուրհուրդը յենթակայի կատարած գործողությունը, առաջ ե գալիս վորպես հետեւանք այդ գործողության. չեր կատարվել այդ գործողությունը, չկար այդ առարկան. յենթական կատարեց այդ գործողությունը, և դրա հետեւանքով առաջ յեկավ մի բոլորվին նոր առարկա:

Յերեխան պատուց բուղը նախադասության մեջ պատուց

ստորոգյալի լրացումը՝ բուղը կրում է իր վրա յերեխան յենթակայի գործողությունը, տուժում, վնասվում է այդ գործողությունից: Նույն ձեվով դրատախտակին գրվում և վերլուծվում են մի շարք այսպիսի որինակներ.

Սեղիկը զիրք գնից:

Եման արդուկեց իր շապիկը:

Սուրբիկը սիրում է իր դաստիարակին:

Սիրուշը վուանվագը է գրել:

Արփիկը շար է կարում:

Տրակտորը վարում է արտը:

Մանուշը դեղձ է հավաքում:

Վաչիկը կարեց յեղանգր:

Յերբ ուսուցիչը համոզվում է, վոր աշակերտներն ըմբռնեցին, թե վառերն են կրում իրենց վրա գործողությունը, դանանում գործողության որյեկտ, հայտնում է, թե ստորոգյալի բոլոր այն լրացումները, վորոնց վրա անցնում է գործողությունը, վորոնք առաջ գործողությունը առաջ դրվում են հայցական հոլովով:

Հայցական հոլովը պատասխանում է կամ ո՞ւմ հարցին և նույն վերջավորությունն է ունենում, ինչ վոր տրականը (Եմիկը սիրում է մայրիկին, ուսուցիչը կանչեց Սուրբիկին, Մայրիկը գրկեց յերեխային և այլն), կամ ինչ հարցին և չի ստունում վոչ մի վերջավորություն, ինչպես ուղղականը (Յերեխան վեցցեց մատիքը, Վաչիկը զիրք գնեց, կոլխոզիկի կրտքը շեց, մայրիկը հավը մորքեց և այլն): Կարելի յերեխատրել, վոր յերբ խոսում ենք մարդկանց, անձերի մասին, հայցականը նման է լինում տրականին, իսկ յերբ խոսում ենք առարկաների մասին (Չնչավոր, թե անշունչ, միելանըն ե). Հայցականը նման է լինում ուղղականին: Մի շարք որինակներ վերլուծելով ցույց է տրվում, թե գոյականն իր ուղիղ ձեվով հայցական է, յերբ ստորոգյալի լրացում է, ուղղական է, յերբ յենթակա յե: Հայցականը սեռականի շփոթելու առաջն ել հեշտությամբ կարելի յերեխության վրա կառուցեց ստորոգյալի վոր սեռականը միշտ վորեկե գոյականի վրա յերեխությունը և յենթակայի լրացում, իսկ հայցականը միայն ստորոգյալի լրացում կարող է դառնալ: Ավելի դժուար է հայցականի հետ շփոթելը կանխել: Այսուել շեշտը պետք է դնել իմաստի, բովանդակության վրա. տրականը հանգման առարկան է, հայցականը կրող առարկան: Կարելի յերեխությունը դի-

մել այս միջոցին, վորը թեև մի քիչ բարդ է և ավելի համապատասխան բարձր գասարաններին: Ասենք տրված ե այսպիսի մի նախադասություն. Սուրբիկը նայում է ուսուցչին: Ուսուցչին արական ե, թէ հայցական, իմաստից գտնելը դժվար է, վորովհետեւ նոյնի, տեսնել, նկատել և դիմել բայերի սեռը տարբերելը հեշտ չե, դրանցից նայելը պահանջում ե տրական հոլով, վորովհետեւ չեղոք ունի բայ ե, իսկ մյուս բայերը՝ հայցական հոլով, վորովհետեւ ներգործական սեռի բայեր են: Այսպիսի գեղքեր շատ կպատճեն: Հավաստիանալու համար, վոր ուսուցչին տրական ե, հարկավոր ե այդ անձ ցույց տվող բառը փոխարինել առարկա ցույց տվող բառով: յեթե փոխարինող բառը դարձավ ուղղականի նման, այսինքն հոլովական վերջավորություն չունեցավ, նշանակում ե, ուսուցչին հայցական եր, վորովհետեւ միայն հայցական հոլովն ե, վոր յերբեմն (անձ ցույց տալիս) նման է տրականին, յերբեմն ել (առարկա ցույց տալիս) ուղղականին: Բնդիսակառակը, յեթի նոր բառն ել (առարկա ցույց տվող) նման յեղավ տրականին, նշանակում է ուսուցչին տրական ե, վորովհետեւ այլ կերպ առարկա ցույց տվող բառը հայցական լինելու գեղքում պիտի նմանվել ուղղականին: Այս միջոցը յերբեմն կողնի նաև ուսուցչին ստուգելու բայի սեռը կամ անձ ցույց տվող բառի տրական թե հայցական լինելը, մի բան, վոր յերբեմն իսկապես դժվար ե լինում: Մյուս հոլովներն անհամեմատ ավելի հեշտ ե սովորեցնել, վորովհետեւ նրանք ունեն իրենց հատուկ վերջավորությունները և ուրիշ վոչ մի հոլովի հետ զփոթվել չեն կարող: Նոյն ձեվով գրատախտակի վրա գրվում են մի շարք նախադասություններ և վերլուծելով պարզում, վոր բացառականը այն առարկան ե, վորից սկսվում, մեկնում ե գործողությանը, գործիականը գործողության գործիքն ե, ան առարկան, վորով կատարում ենք գործողությունը (Դրում ե մատիսով, ... կրում ե դաշնակով, ... փարում ե բանով, ... նկարում ե վրձնով և այլն), ներգոյականը այն առարկան ե, վորի մեջ, ներսում կատարվում ե գործողությունը (...խաղում են պարտեզում, ... պարտպում են դաստանում, ... ուսիսում ե բանով, ... նկարում ե վրձնով և այլն), Բացառական, գործիական և ներգոյական հոլովները կարող են դառնալ միայն ստորոգյալի լրացում:

Հոլովները բացատրելուն զուգընթաց լավ կլինի բացատրել, ստուգաբանելով իմաստավորել նաև հոլովների անունները։ Այսպես, ուղղականը (ուղիղ-ական) ցույց ե տալիս բառի ուղիղ ձևը։

տրականը (տուր-ական) այն առարկան ե, վորին մի բան ե տրվում, մատուցվում. հայցականը՝ խնդրում, հայցում, պահանջում ե մի առարկա, վորի վրա անցնի գործողությունը. բացառականը՝ (ի բաց առնել) այն առարկան ե, վորից խլվում, հեռացվում, վերցվում ե մի բան. գործիականը՝ գործողության գործիքն ե, ներփայականը՝ (ներ-գոյ՝ գոյի, առարկայի ներսում) այն առարկան, վորի մեջ կատարվում ե գործողությունը և այլն:

Ֆորմալիստական քերականության գլխավոր արատն այն էր, վոր հոլովակերը բնորոշելիս առաջնորդվում էր միայն վերա-ջավորությամբ, ձևով. այդ պատճառով ել հոլովակերի աղյուսակից դուրս ելին զցված սեռական և հայցական հոլովակերը, վորովհետև նրանք հոլովական առանձին վերջավորություն չունեին, նման ելին կամ ուղղականին, կամ տրականին: Ինչ խոսք, վոր հոլովակերի այդ ձևի ուսուցումը մեծ վաստակ աշակերտների մեջ քերականական մտածողություն զարգացնելու գործին, ձևի և բովանդակության խզում առաջ բերեց, վորի հետեւանքն յեղավ այն, վոր աշակերտներն անգիր կրկնում ելին հոլովական աղյուսակը, բայց չելին ճանաչում հոլովը խոսքի մեջ: Այս նկատառումներից յելնելով ե, վոր մենք հոլովական ճանաչումը միշտ պիտի կապենք նախադասության հետ. գոյականը հոլով ունի միայն այն ժամանակ, յերբ գործածվելով խոսքի մեջ՝ դառնում ե յենթակա և յենթակայի կամ ստորոգյալի լրացում և ըստ այդմ ել փոխում ե իր վերջավորությունը:

Յերբ աշակերտներն արդեն գտղափար կազմել են գոյականի հոլովման մասին, պետք ե տալ այնուհետև հոլովման տախտակը և պահանջել վոր աշակերտները սովորեն այն լիովին: Դա, ահամար ուսուցիչը գրատախտակին գրում ե.

Ուղղական՝ ի՞նչ	դպրոց(ը)
Սեռական՝ ի՞նչի՞	դպրոցի
Տրական՝ ի՞նչի՞	դպրոցի(ն)
Հայցական՝ ի՞նչ	դպրոց(ը)
Բացառական՝ ի՞նչի՞ց	դպրոցից
Գործիական՝ ի՞նչո՞վ	դպրոցով
Ներգոյական՝ ի՞նչո՞ւմ	դպրոցում
Բացարձում ե,	վոր այս հարցերը տրվում են միայն առաջ ցույց տվող բառերի (շնչափոր և անշոնչ) հոլովան ժամկետի յիշը հոլովան բառը ցույց է տալիս անձ, մարդ գործ են ածվում բոլորովն ատարեր հարցեր,

Ուղղական՝ մկ	աշակերտ(ը)
Սեռական՝ մում	աշակերտի
Տրական՝ մում	աշակերտի(ն)
Հայցական՝ մում	աշակերտի(ն)
Բացառական՝ մումից	աշակերտից
Գործիական՝ մումով	աշակերտով
Ներգոյական՝ մում մեջ	աշակերտի մեջ

Կարելի յե ավելացներ վոր անձ ցույց տվող բառերի հոլով-  
ման ժամանակ, յերբ գործ ենք ածում անորոշ առումով, յերբեմն  
հայցական հոլովը գործ ե ածվում ուղղականի նման (դիլեկտովը  
մի առաջեց ընդունեց դպրոց):

Ուսուցիչը քերականության հաջորդ թեմային անցնում և  
միայն այն ժամանակ, յերբ համոզվում ե, վոր աշակերտները վոչ  
միայն կարողանում են հոլովել տված բառը, այլև կարողանում  
են ճանաչել հոլովը նախադասության մեջ և ուսուցչի առաջարկած  
հոլովներով նախադասություններ կազմել:

Դրա համար մեծապես պետք ե ոգտագործել գոյականը նախա-  
դասությամբ հոլովելու ձեր: Վարժություններ պետք ե կատարել  
թե դասարանում, թե տանը, թե բանավոր, թե գրավոր: Պահետք  
ե վախենալ հոլովմանը շատ ժամանակ տրամադրելուց, դա ձևա-  
բանության ամենահիմնական մասերից մեկն ե. յեթե այդ թե-  
ման աշակերտները լավ յուրացրին, հետագայում շատ դժվարու-  
թյուններ կդառնան հեշտ հաղթահարելի:

Մնում ե պարզել նաև այն հարցը, թե ինչպես պլանավորել  
քերականությանը վերաբերող թեման: Ինչպես վերև նշվեց,  
մինչև այժմ ել մեր ուսուցիչների վորոշ մասի մեջ քերականու-  
թյան վերաբերյալ ճիշտ դիրքավորում չկա: Յերբեմն իշխում ե  
այն մտավախությունը, թե քերականությանը շատ ժամանակ  
տրամադրելը կհամարվի սխոլաստիկա: Այս ե պատճառը, վոր սո-  
վորաբար քերականությանը հատկացվում դասի վերջին 10—15  
րոպեն, կամ աշխատում են ընթերցանության ժամին մի կերպ  
քերականությունը բղխեցնել ընթերցանության հոդվածից, կա-  
պել նրա հետ, դիտել տալ քերականական յերևույթը և յեղբա-  
կացություններ հանել: Զուր մտավախություն: Յեթե նյութը  
պահանջում ե, վոչ միայն կարելի, այլև անհրաժեշտ ե ամբող-  
ջական ժամեր տրամադրել քերականության ուսուցմանը, ինար-  
կե, այդ չի նշանակում, վոր ամեն գեպքում, յերբ հարկ ե լինում  
բացարել քերականական վորեւ կանոն, կըկնել անցածը կամ

վարժություններ կատարել, պետք ե անխուսափելիորեն տրամադր-  
ելը ամբողջ դասը: Բայց յեթե ավյալ թեման յուրացնելու համար  
նպատակահարմար ե հատկացնել ամբողջ ժամը, ապա դասատուն  
տատանվելու վոչ մի առիթ չունի: Հատկապես հոլովումների ու-  
սուցման ժամանակ կարիք կլինի քերականությանը նվիրել ամ-  
բողջական ժամեր, մնում ե ուսուցչին՝ այնպիսի հմտությամբ  
կազմակերպել դասը, վոր աշակերտները հետաքրքրվեն նյութով  
և ուշադրությամբ հետեւն ու յուրացնեն ավանդելիքը: Դրա հա-  
մար առաջին հերթին անհրաժեշտ ե դասը հագեցնել բաղմազան  
իմաստալից ու դաստիարակիչ որինակներով, վորոնք պետք ե  
մշակվեն, ընտրվեն վաղորոք, դասը պլանավորելիս: Ուսուցիչը  
մեծ ուշադրություն պետք ե գարձնի հատկապես քերականության՝  
դասի պահանը կազմելիս: Մրգելիքը որինակները պետք ե ընտրել  
մանրակրկիտ պրպտումներից հետո միայն և մտցնել դասի կոնս-  
պեկտի մեջ՝ խուսափելու համար ամեն տեսակի պատահականու-  
թյուններից:

7104

Խմբագիր՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
Սըբագրիչ՝ Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

Հ Արմ.  
3-43882

Խմբագիր  
Օ. ԲԻՕ  
ՀԱՅԱՍՏԱՆ  
ՀԱՅ-ԱՐՄ. ССР

Գլուխիտի լիազոր Դ-1064, Երան. № 178  
Պատվեր № 39, տիրաժ 1000

Լուսհրատի տպարան.

